

ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ԶԵՐՆԱԴՐՈՒԹԻՒՆ

13 Ապրիլ, Շաբաթ առաւօտ, ի ժամ Ս. Պատարագի, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կատարեց Սարկաւագական ծեռադրութիւնը երեք երիտասարդներու: Խաղարէթ Տէր Վարդամեամի, արհեստով դերձակ եւ քանի մը տարիներէ ի վեր իրեւ Ուրարակիր Սրբատելեաց մէջ ծառայող: Ռումանիային ամուսնացած եւ քահանայութեան պատրաստուելու համար Ս. Քաղաք զալով Ս. Արռողյա Ընծայարամին աշակերտած Տրց. Ազատ Մանտակեամի. եւ յիշեալ Կրրարամի Բարձրագոյն կարգի ուսանող Տրց. Սարգիս Աւետիքեամի: Խարտաւիլակն եր Լուսարարացետ Գերշ. Տ. Դավիթ Եպիսկոպոս:

Նախորդ օր, երեկոյեամ ժամերգութեամ աւարտին, դարձեալ Մայր Տաճարին մէջ, առօր սուացած էին կիսասարկաւագութեամ աստիճան:

Յուզիչ էր պահը եր Ընծայեալները ժողովուրդին կը դառնային ձեռամբարձ: Առօր սուացած Ն. Ամենապատուուրենէն Ս. Աւետարամի ընթերցման եւ Ս. Սկիեի վերաբերումը կատարելու իրաւունքները:

Ստորեւ ամոնց կենսագրական գիծերը.-

ԱԱԶԱՐԵԹ ՄՐԿ. Տէր ՎԱՐԴԱՆՆԵԱՆ ծնած է Երուսաղէմ՝ 1923ին: Թոռնիկն է Մարաշի Ս. բառասուն Մամկանց Եկեղեցոյ Քահանայ Տ. Վարդան Ա. Քինյ. Տէր Վարդամեամի, օր ջարդէն նողուարձ՝ 1921ին հաստատուած է Երուսաղէմ:

Խաղարէթ Մրկ. իր նախակրթութիւնը սուացած է տեղույս Ս. Թարգմանչաց Վարժարամին մէջ, զոր աւարտած է 1938ին: Յետոյ հետեւած է դերձակութեամ արհեստին: Մանուկ հասկեն եղած է Եկեղեցաւեր, ու ծառայած է որպէս դպիր ի Ս. Ճռէշտակապետ, ի Ս. Յարութիւն եւ ապա ի Ս. Յակոբ: Ամուսնացած է 1958ին Լիբանանահայ Միհրան Սողոմոնեամի դստեր՝ Լուսիմի հետ եւ հայր է երկու դուստրերու (Եւա եւ Մարի), այժմ ամուսնացեալ: Առ ի զարատանը իր ծառայութեան, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպոս. Գագամեամ (այժմ Պատրիարք Մբրահայոց) Ուրար կրելու արտօնութիւն տուած է իրեն:

ԱՉԱՏ ՄՐԿ. ՄԱՆՏԱԼԵԱՆ ծնած է Ռումանիոյ Սուչավա քաղաքին մէջ Յ Մայիս 1955ին: Իր նախական եւ Երկրորդական ուսումը սուացած է իր ծեսդավայրին մէջ մինչեւ 1974: Յաջորդ տարի մեկնած է Մայր Հայրենիք եւ Երկու տարի հետեւած Ս. Էջմիածնի Հոգեւոր ծեմարամի դասընթացքներու: Հոմ է որ սուացած է Դպրութեամ չորս աստիճանները (1976ին) եւ Ուրար կրելու արտօնութիւն (1977ին): Վերադառնալով Ռումանիա, հետեւած է համալսարանական ընթացքի եւ 1984ին աւարտած է Բոլիտեխնիկական բաժինը: 1990ին Երուսաղէմ զալով հետեւած է Ընծայարամի դասընթացքներու:

Ազատ Մրկ. ամուսնացած է եւ հայր է երկու զաւակներու: Պիտի վերադառնայ Ռումանիա եւ ընդունի Քահանայական օծում:

ՍԱՐԳԻՍ ՄՐԿ. ԱԻԵՏԻՔԵԱՆ ծնած է Պէյրութ՝ Յ Մարտ 1975ին: Խախմական ուսումը սուացած է տեղույս Եկեղեցնեամ Վարժարամին մէջ, զոր յաջողութեամբ աւարտելէ Եոր, շուրջ երեք տարի յանախած է Մեծի Տամն Կիլիկիոյ Կաթողիկոսութեամ Զարեհեան Դպրեվամբը: 1989ին Երուսաղէմ զալով՝ ընդունուած է Ս. Արռողյա Ժառանգաւորաց Վարժարամի: Իր նախասիրած Ծիւթերն են Հայոց Պատմութիւն, Անգլերէն եւ Արաբերէն լեզուներ եւ Եկեղեցական Երաժշտութիւն: